

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք.Երևան

N -Ա

« » 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ
ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

- 1) «Տուբերկուլոզի լաբորատոր ախտորոշման ուսումնական ձեռնարկը»՝ համաձայն հավելված 1-ի:
- 2) «Քսուքների համարակալման կարգը»՝ համաձայն հավելված 2-ի:
- 3) «Տարողությունները բռնելու, բացելու և մասնիկի ընտրության կարգը»՝ համաձայն հավելված 3-ի:
- 4) «Քսուքի պատրաստման, չորացման, ֆիքսման և ներկման կարգը»՝ համաձայն հավելված 4-ի:
- 5) «Մանրադիտակի օգտագործման, խնամքի և մանրադիտման նախապատրաստման կարգը»՝ համաձայն հավելված 5-ի:
- 6) «Քսուքների գնահատման կարգը»՝ համաձայն հավելված 6-ի:

- 7) «Կուլտուրալ մեթոդների նկարագրությունը»՝ համաձայն հավելված 7-ի:
 - 8) «Քսուքների արտաքին որակի գնահատման սկզբնական արդյունքների ձևաչափը»՝ համաձայն հավելված 8-ի:
 - 9) «Խորխի լաբորատոր հետազոտության վերաբերյալ դասընթացների իրականացման օրակարգը»՝ համաձայն հավելված 9-ի:
2. Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներին՝ ի ղեկավարումն ընդունել սույն հրամանի Հավելված 1-ով, 2-ով, 3-ով 4-ով, 5-ով, 6-ով, 7-ով, 8-ով և 9-ով հաստատված տուբերկուլոզի լաբորատոր ախտորոշման ուսումնական ձեռնարկի պահանջները:
 3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ